

ԼՂՀ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՍԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԵՎ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ  
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

# ԼՂՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ



Նշված տարածքները ժամանակավորապես գտնվում են նախապայմանի վերահսկողության տակ

## ԲԱԺԻՆ 1

### ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ

#### **Մեթոդաբանական պարզաբանումներ**

**Առկա բնակչության** թվաքանակի ցուցանիշում ներառված են մարդահամարի ժամանակ մշտապես ներկա և ժամանակավոր ներկա հաշվառված անձանց ընդհանուր թվաքանակները:

*Մշտապես ներկա* են համարվել տվյալ համայնքում հաշվառված՝ մարդահամարի պահին ներկա անձինք և տվյալ համայնքում չհաշվառված, սակայն, մարդահամարի հաշվառման պահի դրությամբ այդտեղ մեկ տարուց ավելի տևողությամբ բնակվող ներկա անձինք:

*Ժամանակավոր ներկա* են համարվել այն անձինք, ովքեր մարդահամարի հաշվառման պահին գտնվել են տվյալ համայնքում, սակայն նրանց մշտական բնակավայրը գտնվել է տվյալ համայնքի (այդ թվում՝ հանրապետության) սահմաններից դուրս և նրանց գտնվելու տևողությունը՝ նշված պահի դրությամբ, չի գերազանցել մեկ տարուց:

**Մշտական բնակչության** թվաքանակի ցուցանիշում ներառվել են մարդահամարի ժամանակ մշտապես ներկա և ժամանակավոր բացակա հաշվառված անձանց ընդհանուր թվաքանակները:

*Ժամանակավոր բացակա* են համարվել այն անձինք, ովքեր մշտապես (տվորաբար) բնակվել են տվյալ համայնքում, սակայն մարդահամարի հաշվառման պահին գտնվել են տվյալ համայնքի (այդ թվում՝ հանրապետության) սահմաններից դուրս, և նրանց բացակայության տևողությունը՝ նշված պահի դրությամբ, չի գերազանցել մեկ տարուց:

